Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՄԱԶՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 5-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնը կազմակերպում է «ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» խորագրով հանրապետական 5-րդ ուսանողական գիտաժողովը

Գիտաժողովն անցկացվելու է 2027 թ. մայիսի 5-ին Երևանում (Տիգրան Մեծ 17):

Ուսանողական գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2027թ. մարտի 1-ը աշխատանքները ներկայացնել psyconf@aspu.am էլեկտրոնային հասցեին: Հայտերի հաստատման մասին հայտատուները կտեղեկացվեն մինչև 2027թ.ապրիլի 1-ը: Ելույթի համար նախատեսված տեսասահիկները 7 րոպե տևողությամբ (PowerPoint Presentation) ուղարկել psyconf@aspu.am էլ-հասցեին հաստատման նամակ ստանալուց հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոն (հեռ. +374 10 59 70 42), (+374 98 23 30 23) Սաթենիկ Տեփոյան կամ (+374 95 99 50 45) Աննա Մուրադյան (WhatsApp, Viber) հեռախոսահամարներով կամ գրել psyconf@aspu.am էլեկտրոնային հասցեին:

Գիտաժողովի կազմկոմիտե

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԵՆ.

Հարգելի՛ ուսանողներ.

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ 2027թ-ի **մայիսի 5-ին ՀՊՄՀ-ում** (Տիգրան Մեծ 17) կազմակերպվում է **«Հոգեբանական հետազոտություններ»** խորագրով **ուսանողական հինգերորդ գիտաժողովը**: Ուսանողական գիտաժողովին կարող են մասնակցել ՀՀ ԲՈՒՀ-երի հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները և շրջանավարտները:

Գիտաժողովին մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հոգեբանության բնագավառում կատարված հետազոտությունը՝ հետևյալ ձևաչափով. Հետազոտության արդիականությունը, նպատակը, վարկածը, խնդիրները, մեթոդները, համակազմը, արդյունքները 6-8 էջ (A4 ձևաչափ, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 11, միջտողային տարածքը՝ 1.15, վերևի, ներքևի, աջ և ձախ լուսանցքները՝ 2.0 սմ, առանց տողադարձերի, պարբերության խորությունը՝ 0.75 սմ): Նկարների և աղյուսակների քանակը չպետք է գերազանցի 3-ը, յուրաքանչյուրը էջի¼ -ի չափով, լայնությունը՝ 12.5 սմ (ձևաչափը՝jpg, png):

Վերնագիրը պետք է գրել կենտրոնում՝ 12pt տառաչափով, գլխատառերով և մգեցված (Bold): Վերնագրից հետո նոր տողում11pt տառաչափով մգեցված (Bold) նշվում է հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, այնուհետև փակագծերում՝ հաստատությունը, մասնագիտությունը, կուրսը, քաղաքը, երկիրը: Հաջորդ տողում հեղինակի էլեկտրոնային փոստի հասցենն հեռախոսահամարը: Այնուհետև, նոր տողում գիտական ղեկավարի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, գիտական աստիճանն ու կոչումը: Ապա գրվում է հետազոտության ամփոփագիրը հայերենով (50-70 բառ), հաջորդ տողից՝ հիմնաբառեր՝ 6-8 բառ:

Հետազոտության տեքստն առանձնանում է դատարկ տողով: Հիմնական տեքստից հետո գրվում է գրականության ցանկը (նշելով՝ Գրականություն) այբբենական կարգով (5-ից ոչ ավելի) սկզբում աշխատանքի լեզվով աղբյուրները, այնուհետև՝ այլ լեզուներով աղբյուրները: Գրականության ցանկը կազմվում է ԱՀԱ 7 (APA 7) ձևաչափով: Գրականության ցանկում հղումները դասավորվում են այբբենական կարգով՝ առաջին հեղինակի ազգանվան հիման վրա: Տեքստում գրականության մեջբերումը նշվում է փակագծերում հետևյալ կերպ՝

- (հեղինակի ազգանունը նախադասության մեջ):

Սարգսյանը (2020) նշում է, որ կրթության ոլորտում փոփոխությունները անհրաժեշտ են:

- (հեղինակի ազգանունը փակագծերում):

Կրթության ոլորտում փոփոխությունները անհրաժեշտ են (Սարգսյան, 2020):

- Եթե մեջբերում եք կոնկրետ էջից, նշեք էջի համարը:

... (Սարգսյան, 2020, էջ 25):

Վերջում 2 լեզուներով շարադրվում է վերնագիրը, հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, փակագծերում հաստատությունը, մասնագիտությունը, կուրսը, քաղաքը, երկիրը, ապա հետազոտության ամփոփագրերը 2 լեզուներով (50-70 բառ), նոր տողից հիմնաբառերը՝ 6-8 բառ: Ֆայլի անվանումը՝ հոդվածի հեղինակի անուն, ազգանունը և հոդված (Աբրահամյան Արամ—հոդված): Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Ստացված հայտերն անցնելու են մասնագիտական դիտարկման փուլ: Դրական արդյունքի դեպքում հայտատուի մասնակցությունը կհաստատվի պատասխան նամակով: Տեխնիկական պահանջներին չհամապատասխանող հոդվածները չեն դիտարկվելու: Գիտաժողովի օրը հեղինակներին կտրվի տպագրված հոդվածների ժողովածուի երկու օրինակ և մասնակցության երկլեզու վկայական: